ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE03-D8F3-4E69-9230 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒՄԱՍԻՆ

ԵԴ2/3484/02/26 ք. Երևան
8 Ապրիլի 2026թ

ՀՀ Երևան քաղաքիառաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Տ.Գրիգորյանս(այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով «ՄԻՆԵ» ՍՊԸ-ի հայցադիմումը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվոր «ՄԻՆԵ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-ի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից «Տպագրված ապրանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-26/ՏՊԱ-1 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 19.03.2026թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ «Մինե» ՍՊԸ-ին ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-26/ՏՊԱ-1 ծածկագրով ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 17-րդ, 29-րդ, 38-րդ չափաբաժնների մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի 02.04.2026թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցադիմումն կրկին ներկայացվել է էլեկտրոնային համակարգով Դատարան և 06.04.2026թ. ժամը 21:14-ին մակագրվել է դատավոր Տ.Գրիգորյանին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. լիազորված մարմին՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմին:

Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-122-րդ հոդվածներով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր:

Միևնույն ժամանակ, Դատարանը գտնում է, որ պատասխանող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-ից անհրաժեշտ է պահանջել թիվ «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-26/ՏՊԱ-1» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

Հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր

նշանակել 29.04.2026թ.:

Պատասխանող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-ից պահանջել թիվ «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-26/ՏՊԱ-1» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմին ՀՀ ֆինանսների նախարարությանը:
Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by GRIGORYAN TIGRAN 4008820477
Date: 2026.04.08 16:04:46 AMT

Դատավոր՝
Տիգրան Գրիգորյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am